# ԾՐԱԳԻՐ

**20 հունիսի, *երկուշաբթի, ՀՀ ԳԱԱ***

10:30-10:50 Մասնակիցների գրանցում

Նստաշրջան I. *Աստղագիտության բազմաճյուղայնությունը*

11:00-12:00 Գիտաժողովի պաշտոնական բացումը և ողջույնի խոսքեր.
ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյան, ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյան, ՀՀ-ում արտասահմանյան պետությունների դեսպաններ, ՀՀ ստեղծագործական միությունների նախագահներ, Միջազգային աստղագիտական միության աստղագիտության զարգացման տարածաշրջանային կենտրոնի տնօրեն Արեգ Միքայելյան

**12:00-12:30 Հյուրասիրություն, աստղագիտական գրքի ցուցահանդես**

12:30-13:00 Արեգ Միքայելյան – *Աստղագիտությունը որպես միջճյուղային և բազմաճյուղային գիտությունների առաջատար*

13:00-13:15 Սոնա Ֆարմանյան – *Մշակութային աստղագիտությունը Հայաստանում և աշխարհում*

Նստաշրջան II. *Աստղագիտություն և մշակույթ*

13:15-13:30 Մկրտիչ Կարապետյան – *Աստղագիտական թեմաները և ժամանակակից տեխնոլոգիաները հրատարակչական գործում*

13:30-14:00 Դավիթ Սամվելյան – *Աստղագիտության դրսևորումները պոեզիայում (ընդհանուր ակնարկ) (հրավիրված զեկուցում)*

14:00-14:15 Գոհար Վարդումյան – *Տիեզերքը հայոց դիցաբանական պատկերացումներում*

14:15-14:30 Գայանե Պողոսյան – *Արևի աստվածության պատկերագրությունն ու խորհրդաբանությունը Ուրարտուի արվեստում*

**14:30-15:00 Սուրճի ընդմիջում**

15:00-15:15 Կարինե Առաքելյան – *Երկնային մարմինների, լուսատուների անվանումների փոխաբերական կիրառությունները Մ. Մեծարենցի չափածոյում*

15:15-15:30 Արսեն Համբարձումով – *Տիեզերք, առասպել և կինոարվեստ*

15:30-15:45 Մարիամ Այդինյան – *Գրիգոր Գուրզադյանը՝ աստղագետ, էսեիստ և նկարիչ*

15:45-16:00 Անի Գրիգորյան – *Աստղագիտական բնույթի հորինվածքների կիրառումը ճարտարապետական փոքր ձևերում*

16:00-16:15 Լիլիթ Արսենյան – *Բյուրականը և գեղանկարիչ Հովհաննես Զարդարյանը*

16:15-16:30 Լիլիթ Մկրտչյան – *Աստղագիտական գիտելիքների ցուցադրումն ազգային տոների միջոցով*

16:30-16:45 Անահիտ Եղիազարյան – *Աստղաբանություն. գիտություն, արվեստ, թե՞ մարգարեություն*

16:45-17:00 Անուշիկ Կիլինյան – *Աստղահերալդիկա*

**21 հունիսի, *երեքշաբթի, ՀՀ ԳԱԱ***

Նստաշրջան III. Պատմա-աստղագիտություն

10:30-11:00 Էդուարդ Դանիելյան – *Երկրաշարժի առաջացման տեսությունը և Մասիսի տիրույթի աստղերի դիտարկումը Պլինիոս Ավագի և Անանիա Շիրակացու երկերում (հրավիրված զեկուցում)*

11:00 -11:30 Սիմոն Հմայակյան – *Դիցարանի և տարվա կառուցվածքը Վանի թագավորությունում (հրավիրված զեկուցում)*

11:30-11:45 Կարեն Թոխաթյան – *Երկնային լուսատուներն ու երևույթները ժայռապատկերներում*

11:45-12:00 Ռոլանդ Թմոյան – *Հայ վաճառականի ձեռնարկը՝ որպես ճանապարհային ուղեցույց. Ղուկաս Վանանդեցի*

**12:00-12:30 Սուրճի ընդմիջում**

12:30-12:45 Ելենա Մոխսենա – *Աստղագիտության բացահայտումները միջնադարյան Հայաստանում*

12:45-13:00 Գուրգեն Մուրադյան – *Տարածության և ժամանակի հղացքն ըստ Եվսեբիոս Կեսարացու*

13:00-13:15 Արմինե Մուրադյան – *Պատմության մեջ հիշատակված կարևորագույն արեգակնային և լուսնային խավարումների մեկնություն*

13:15-13:30 Լիլիթ Մկրտչյան – *Շիրակացու տիեզերագիտությունն ու բնափիլիսոփայական հայացքները*

13:30-13:45 Գուրգեն Ասլանյան – *Աստղագիտական գիտելիքների վերծանումն աշխարհացույցերում*

13:45-14:00 Սոնա Ֆարմանյան – *Աստղագիտական գիտելիքները հայ միջնադարյան հանելուկներում*

**14:00-15:00 Ճաշի ընդմիջում**

# Դիցարանի և տարվա կառուցվածքը Վանի թագավորությունում

Սիմոն Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Էլ. փոստ՝ s.hmayakyan@gmail.com

Վանի թագավորությունը (Ուրարտուն) հին արևելյան երկիր էր, որը ձևավորվել է Հայկական լեռնաշխարհում, մ.թ.ա. 9-րդ դարում: Նույն դարի վերջին քառորդում, Իշպուինի և Մինուա արքաների համատեղ գահակալության տարիներին ձեռնարկվեց բարեփոխությունների մի մեծ ծրագիր, որով այս նոր տերության և մշակույթի ձևավորման հիմքը դրվեց:

Բարեփոխություններն ընդգրկում էին երկրի կենսագործունեության բոլոր կարևոր բնագավառները՝ պետական լեզու, կրոն, չափ ու կշռի արժեչափեր, սոցիալական հարաբերություններ, հողատիրության ձևեր, բանակ ու զորատեսակներ, իրավունք (Ս. Հմայակյան):

Դժվար է պատկերացնել, որ բարեփոխումների ծրագրման այս փուլում անտեսված լիներ ժամանակի հաշվարկի խնդիրը:

Վանի թագավորության դիցարանի կառուցվածքի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ այն խիստ կարգավորված է եղել (Գ. Ղափանցյան): Վանի թագավորության աստվածություններն իրենց աստիճանակարգերով հայտնի են տերության գլխավոր՝ Խալդի աստծուն ձոնված, հետագայում «Մհերի դուռ» անվանված «դարպասների» սեպագիր արձանագրությունից:

Դիցարանի կառուցվածքն արտահայտող թվային արժեքները շատ առումներով համընկնում են Հ. Բադալյանի, և Բ. Թումանյանի կողմից մեկնաբանված «հայկական արեգակնային տոմարի» թվային արտահայտությունների հետ:
Վանի թագավորության փիլիսոփաները, երկրի դիցակարգը կազմելիս, որպես հիմք են ընդունել, թերևս, իրենց օրացույցի թվային արժեքները. այսպես. առաջին կարգի աստվածությունների քանակը (6+1)՝ համապատասխանում է շաբաթվա օրերի քանակին՝ 7: Երկրորդ կարգի աստվածությունների քանակը 12/+1/՝ համապատասխանում է տարվա ամիսների թվին՝ 12 երեսնօրյա և մեկ հնգօրյա: Երրորդ կարգի աստվածությունների քանակը՝ 52/+1/ համապատասխանում է տարվա շաբաթների քանակին՝ 52 շաբաթ և մեկ օր: Աստվածությունների ընդհանուր քանակն է՝ 70/+1/, որոնց թվում՝ 35/+1/ աստված և 35 աստվածուհի: Սա համապատասխանում է ամսվա օրերի քանակի հետ՝ 30, լրիվ ամիսներում և 5 օր «ավելյացում», հաշվառված է նաև քառորդ օրը: Ընդ որում, օրը բաժանված է եղել ցերեկային (աստվածներին ձոնված) և գիշերային (աստվածուհիներին ձոնված) մասերի:

Չնայած պաշտոնական տոմարի գոյությանը՝ վկայված տարիների և ամսանունների հիշատակությամբ արձանագրություններում և տարեգրությունների առկայությամբ, երկրում կիրառվում էր նաև «ժողովրդական» տոմարը (Ս. Հմայակյան, Լ. Սիմոնյան):

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

երիտասարդական գիտաժողով

20-23 հունիսի, 2016թ.

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ ԵՎ ԹԵԶԻՍՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ